

ԱՆԼՌԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՑՈՒՆ

«Եւ արդ, Սո՛ւրբ Նահատակներ, անմոռաց յիշմամբ,
օրհնաձայն յայցմամբ աղաչում ենք ձեզ,
ընդունէք մեր աղօթքները եւ բարեխօսեցէք մեզ համար,
որպէսզի եւ մենք անդադար ձայնով ու աներկիւղ սիրով
փա՛ռք վերառաքենք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն,
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»
(Հռչակագիր Եպիսկոպոսաց ժողովի):

2015 թուականի ապրիլի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահութեամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Ծայրագոյն Պատրիարքի եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի, Հայ Եկեղեցու, Հայրենիքի եւ Հայ ազգի աստուածատուր կեանքում տեղի ունեցաւ դարակազմիկ իրադարձութիւն՝ սրբադասում: Շուրջ չորսդարեայ ընդմիջումից յետոյ Հայ Եկեղեցին վերականգնեց սրբադասման կանոնը: «Յիշատակ Սրբոց Նահատակաց, որք կատարեցան յընթացս Յեղասպանութեան Հայոց վասն Հաւատոյ եւ վասն Հայրենեաց» Հռչակմամբ մահը յաղթուեց Կեանքով՝ Քրիստոսով, խաւարը լուսաւորուեց, ցաւն ու տառապանքը փարատուեցին, Հոգու մէկդարեայ խռովքը խաղաղուեց. «վասն Յիսուսի եւ վասն Հայկազեան ցեղի» Նահատակները սրբացան, բայց մինչ օրս Յեղասպանութեան վէրքը մնաց չսպիացած, յաւիտենական պայքարը՝ չյաղթահարուած:

Հայի ողբացեալ ու արիւնոտ սիրտն այսօր եւս շարունակում է «անդադար ձայնիւ եւ անլուր բերանով» սաղմոսել. «Տէր սուրբ եւ ճշմարիտ, մինչեւ յերբ ոչ դատիս եւ ոչ խնդրես ըզվրէժ արեան մերոյ ի բնակչաց երկրի» (Յայտ. Զ. 10)։ Իսկ Աստուածորդին պատուիրում է. «Երանի՛ է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ եւ հալածեսցեն, եւ ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ։ Ցնծացէք եւ ուրա՛խ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս» (Մատթ. Ե. 11-12)։ Հաւատարիմ տիրաւանդ խօսքին՝ «Եղեռնահար Սուրբ Նահատակները յաւիտենապէս փառաւորւում են Աստուծոյ աջ կողմում, քանզի ուրանալով իրենց անձերը՝ Հետեւեցին Տիրոջը։ Աւելին՝ իրենց երկրաւոր կեանքում ճշմարտապէս հաւատացին Քրիստոսի անսուտ խոստմանը, թէ՝ «Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ եւ մեռանի, կեցցէ» (Յովհ. ԺԱ. 25)[1]։

Բարեխօսական յաղթանակով ու յարուցեալ հաւատով Հայաստան աշխարհը վերածնուեց տիրապարգեւ յոյսի մէջ, պայծառացաւ Հայի հաւատը, ամրապնդուեց սփիւռքացեալ Հայորդու սէրը մայրենի երկրի եւ Մայր Եկեղեցու հանդէպ։ Այսպիսով՝ վերահիմնաւորուեց Հայ մարդու ճամփան, քանզի երջանկայիշատակ Գարեգին Ա. Հայրապետն ասել է. «Մ՛այս է ճամբան յարութեան, մ՛այս է ճամբան Հայութեան, մ՛այս է ճամբան յաւերժութեան»[2]։

Յեղասպան բորենու՝ Թուրքի վայրագութիւնն այսօր եւս սահման չունի, դարձեալ շարունակում է հոխորտալ, վայրահաչել, երբեմն-երբեմն զգացնել, որպէս սատանայ դարձած գազան, շարունակում է մռնչալ՝ փնտրելով արդար հոգիների եւ անմեղ զոհերի։ Սակայն Հայ Եկեղեցին, որպէս «Անլուելի զանգակատուն», իր մայրական հովանու ներքոյ համախմբելով իր տարագիր ուստերին եւ դուստրերին՝ շարունակում է զինել Աստուծոյ սեփական ժողովրդին անսերեր հաւատով, հայրենեաց պաշտպանութեան մէջ՝ Ս. Ղեւոնդեանց ու Ս. Վարդանանց քաջերի անկոտրում հոգով, անմահ արժէքների նկատմամբ պատրաստակամութեան ու նախանձախնդրութեան վեհ եւ անյողդողդ ոգով, ընկերոջ, ընտանիքի հանդէպ քրիստոսապարգեւ սիրով։ Այս տեսլականով եւ հաւատքով Հայ ազգը «Աստուծոյ Հետ մայր մնաւ եւ Նրա Հետ յառնեց» (Ս. Իգնատիոս Անտիոքացու վարքից)։ Ի հաստատումն այս ճշմարտութեան՝ տեղին է յիշատակել ազգիս Վեհափառ Գարեգին Բ. Կաթողիկոսի՝ սրբադասման արարողութեան ժամանակ Համայն Հայութեանն ուղղած պատգամը. «Յեղասպանութեան նահատակների սրբադասումը կե-

[1] «Հայոց Մեծ Եղեռնի Սուրբ նահատակների վկայաբանութիւնը», Ս. Էջմիածին, 2015, էջ 17:
[2] **Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց,** «Ես յաղթեցի աշխարհի...», Էջմիածին, 1997, էջ 113:

նարար նոր շունչ, հնորհ եւ օրհնութիւն է բերում՝ եկեղեցական եւ ազգային մեր կեանքում: Մենք հաւատում ենք, որ մեր ժողովրդի հոգեւոր նոր վերածնդի պակն ենք հիւսում Հայոց ցեղասպանութեան նահատակներին սրբադասելով: Մեր սուրբ նահատակների յիշատակն այլեւս ոչ թէ զոհի ու ննջեցեալի հոգեհանգստեան աղօթք է, այլ՝ յաղթանակած ու նահատակութեան արեամբ սրբագործուած անմարմին զինուորների յաղթական օրհներգութիւն»[3]*:*

2016 թուականի ապրիլի 24-ին Ցեղասպանութիւնից վերյառնած Հայ ժողովրդի ուխտատեղիում՝ Ծիծեռնակաբերդի սրբութեան լոյսով լեցուն բարձունքում, շարականագրի «Եդիր զանձինս ի վերայ Հայրենեաց եւ բնիկ օրինաց, կարգաց, աւանդութեանց»[4] *խօսքերով Հայ եկեղեցին ի ծագս աշխարհի տարածեալ իր զաւակների հետ միասին, Հայրենի երկրի օրհնեալ հողին կանգնած՝ իր աղօթքը վերառաքեց առ Աստուած՝ բարեխօսութեամբ «Սրբոց ապրիլեան նահատակաց», որպէսզի լռէն պատերազմի ձայները, խաղաղութիւն իջնի ի մէջ մարդկան, զօրանայ երկիրը Հայրենի, ամրապնդուի հաւատքը նախնեաց, յագենայ արդարութեան ծարաւը, վերանայ աղքատութիւնն ու անիրաւութիւնը, թագաւորի սէրն ու միութիւնը «փ փառս Աստուծոյ, ի բարօրութիւն Հայոց աշխարհի եւ ի պայծառութիւն աստուածահաստատ Հայ եկեղեցու»:*

«Նահատակք Ապրիլեան կոչեցեալ կենաց ամոյ,
որոց թիւ համարի՝ իբրեւ երկերիւր բիւր.
վրկայք պատուականք նորակերտ ժամանակաց,
ըսկիզբն առեալ կատարման ի քրսանչորս օր ամսեան,
ի հազար ինն հարիւր հընգետասան ամի
թուականութեան դարուցս փրկչական.
Տէր սուրբ եւ ճշմարիտ, զերծո՛ զմեզ ի չար ժամանակէս
եւ հաստատեա՛ առաքինութեամբ՝ օգնականութեամբ սոցին»[5]*:*
(Շարական Սրբոց ապրիլեան նահատակաց):

Տ. Ոսկան քինյ. Յովհաննիսեան

[3] Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խօսքը Հայոց ցեղասպանութեան նահատակների սրբադասման արարողութեան ընթացքում, «Էջմիածին», Դ. 2015, էջ 33:
[4] **Զարէհ վարդապետ Ազնաւորեան,** Կանոն շարականի ապրիլեան նահատակաց, Անթիլիաս, 1990, էջ 8:
[5] Անդ, էջ 10: